ՎԵՑՕՐԵԱՑՔ

ՊԻՍԻԴԵԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

Յաղագս Օդոյ [1]

203 Ո՛ որ նրբամարմին եհեղ զօդ,
(Քանզի առ նոյնն դառնամ անդրէն,
205 Եւ յաւէտ այժմ զսա կլանելով խօսիմ,)
Զամենայն ուրեք սահեալն և մածեալ,
Զբարեկշիռ [2] կշռօղն շնչոյս,
Զառատան հեղումն [3], զանարծաթ զտուրն.
Զի ոչ [4] մեծատուն և ոչ տնանկ [5] յափշտակէ
210 Շնչոյ աւելագունի 'ի նմանէ քարշումն,
Այլ ամենեցուն առաջի արկանէ զհաւասարն շնորհ։
Եւ ամենեցունց պարզ երևի և զանազան.
Անհատ՝ հատիւք, և հոսմամբ՝ անչփոթիւք [6].
Ի բաժանել զշունչն միաւորապէս՝
215 Առաջի հեղեալ ամենայն ուրեք զուգապէս։

Յաղագս Արեգական

Ո՛ որ զկայս զայս զարեգակն ստացաւ [7],
(Քանզի ճեպիմ զամանէ խօսել դարձեալ,
Հայելով անյագաբար և գրելով զարեգակն).
Զհաստարակաց ակն, զգեղեցիկն [8] րիթ.
220 Զամենայնի կերակրիչն [9] հուր. յորժամ 'ի ներքոյ երկրի է՝
Իսկ 'ի վերոյ [10] քան զերկիրս՝ մշակ տուընչեան։ (գիշեր
Զաշխարհականն հայելի, և կամ մանաւանդ

1. Վերնագիրդ և որք զկնի գան՝ յօտար գրչէ դրոշմեալք են յօրինակին։
2. Յօր. մերում՝ բարեկշիռն։
3. Յօր. մերում՝ հոսումն։
4. Յօր. մերում՝ Զոր ոչ։
5. Յոյնն ունի, և ոչ խշիան։
6. Յօր. մերում՝ և անշփոթ հոսիւք։ Այս է, հատանելով՝ անհատանելի մնայ, և հոսելով՝ ոչինչ չիոթի։
7. Իմն ստեղծ, ըստ յունական սնոյ։
8. Յոյնն՝ գյատակատեսն րիթ։
9. Յօր. մերում՝ Զամենակերակրիչն։
10. Յօր. մերում՝ իսկ գեր 'ի վերոյ։

digitised by A.R.A.R.@

Զերևլի կայծակնն[1], արտաքուստ ծագումն,
Կամ առընթեր ծագումն, կամ հրաչալի հեղումն
225 Ներքս մտիւք՝ արտաքս ընդունելութիւնս առնելով[2]։
Ոչինչ 'ի սորա բերմանէսն[3] թարչի,
Բաւական է ամենեցունց՝ ակնարկութեամբ շոյոյն[4]։
Հասանէ մինչև 'ի խորութիւնս տղմոյ[5],
Լուսոյ աղբիւրս աշխարհաշարժս բղխէ.
230 Է հասարակաց գործաստացիկ[6]։
Ի ներքոյ ընթանայ ամենեքումիք զհակառակն,
Որպէս զի անխոտոր բերմանն ուժգնութիւն
Ի կողից ընդդիմացեալ պնդէ զընթացսն,
Զի մի կործանեսցէ պնդութիւն հոլովիցն
235 Ի վաղվաղակի վարուցն շտապոյ.
Այլ որպէս չաղկապ ինչ ընդդիմապինդ հակառակ
Շրջագայութեանն՝ երագութեամբ չարակալեալ լինի.
Հիմամբ ընթացիւք և բերմամբ կառուցմամբ[7].
Զի թէ ոչ էր բարեկարգ, այլ խոտորէր,
240 Զաշխարհ 'ի շեղեն իւրում փաղաղէր։

Յաղագս Լուսնին

Ո՛ որ զաղօտ ֆահն լուսնի՝ յարեգական
Հրափայլութենէ կենդանախարուկեալ,
Ցուեալ 'ի նա լոյս խարտեաշ 'ի նմանէ.
Ոչ գիտեմ զիարդ ասեն, սակայն ուրեմն
245 Ոչ իբր թէ կարօտ գոլով լուսոյ օտարի,
Քանզի դու զլոյս և նախ քան զարև բղխես.
Այլ որպէս զի կարգ դնել ստացուածոցս
Գեղեցիկ կարեաց և իմաստուն իշխանութեան.
Զոմն լինել կարօտ ֆահին՝
250 Զխոնաւարար պաշտպանութիւնսն ածել[8] 'ի ներքս.
Քանզի կարօտ է խոնաւուտ բաղկացութեանն՝ ջերմութիւն.
Զի ջեռուցիչ բոցոյն հեղումն՝ 'ի ներքս

1. Յօր. մերում՝ կայծակնն այաց. (Τὸν ὀπτικὸν σπινθῆρα)։
2. Անիմանալի են տողիցդ իմաստք, որպէս մթին են և 'ի բնագրին։
3. Յօր. մերում ի ստորաբերմանէս։
4. Յօրինակի Հարցն Անտոնեանց՝ շոգոյն, գուցէ վրէպ ընդօրինակութեամբ։
5. Ցոյնն, Հասանէ մինչև ցխորին սահման։
6. Յօր. Անտոնեանց՝ ասատուածաստացիկ. ուղղեցաւ համաձայն մերումն և յունին, ἐργεπείκτης, այն է գործավար, որ զգործն փոխացուցանէ։
7. Նոյն ոճ բանից է, զոր տեսաք և 'ի վեր անդր (տող 122)։
8. Յօր. մերում՝ ածեալ։

Եղեցելովքն հիւթովք խոնաւեցուցէ[1].
Որպէս զի լիցի խառնումն ինչ՝ որպէս յամուսնութեան.
255 Եւ լծակցեալ առ 'ի ծնանել երկոցունց՝
Գեղեցիկ ծնունդս ցուցցէ զսերմանեցելոցն տղայս[2],
Առեալ լուսնի[3] ջերմն փեսայ։
Որոյ[4] ոչ թշնամի և կամ առ 'ի մարտ ինչ արարեալ,
Այլ որպէս զքորս տանուտէր և հայր՝
260 Խաղաղացուցեալ[5] զհակառակաքանութիւնսն[6],
Կարգ ցուցանելով անկարգ չորրորդութեանն.
Որպէս զի աշխարհս այս որպէս տուն[7] մեծ՝
Անխախուտ ցուցցի չորից սեանց օրինակաւ,
Առեալ 'ի ներքուստ հաստատութիւն ընդդիմանեցուկ։
265 Այսպէս բաղկացուցանեսս զանդէպ բնութիւնսն,
Հաւանեցուցանելով զնոսա 'ի միումտան բնակել,
Ի մի կամս զուգափչման մարտին,
Որպէս զի յայնմհետէ հաստարակաց գոլ նոցա զընթացսն
(Եւ զսովորականսն կատարել զպաշտամունս)[8].
Եւ ուրեմն գործ օդառէջ մանելով նիւթ նուրբ
270 Զտուրևառ շնչոյ կենցաղոյս.
Իսկ այլ ոմն ազբունս հրոյ նիւթելով անկտրելիս,
Պատմուճանս[9] հենեալ անկանի՝ առ 'ի ջեռուցանել զբնութիւնս.
Եւ ուրեմն բերեալ պատրաստ ջուր՝ ըստ սովորութեանն,
Զի մի գուցէ ջերմութիւնն խարուկեալ եռանդի.
275 Ուռնէ զերկիր պատրաստել տուն,
Զամենեսին զմեզ կերակրել օր ըստ օրէ։
Այսպէս գերագոյն քան զմիտս գործեաց զէութիւնսս՝
Կարծեօք մարտի միաւորեալս։
Եւ հնձոց կիզող ծայրութիւնն՝
280 Ոչ փութանակի 'ի ձմեռն[10] զջերմութիւնն յեղու,
(Քանզի յանկարծակի փոխադրութիւնք վնասակարք են).
Այլ 'ի յաշունն. և խառնուածով միջակ

1. Բօր. մերում՝ խոնաւացուցանէ։
2. Բօր. մերում՝ Զգեղեցիկ ծնունդս, զսերմանցն տղայս։
3. Բօր. մերում՝ գլուխին։
4. Իմա՛ Աստուծոյ։
5. Բօր. խաղացուցեալ։
6. Բօր. մերում՝ Զհակառակ բնութիւնսն։
7. Բօր. մերում՝ իբրև զտուն մի մեծ։
8. Փակագծեալդ տող չկայ 'ի յայն բնագրի։
9. Բօր. պատմուճանեն, ուղղեցաք ըստ յունին (χιτῶνα)։
10. Բօրինակին՝ գնմեռն, ուղղեցաք ըստ յունին։

digitised by A.R.A.R.@

Գաղութեամբն զցրտութիւնն ապահովեցուցանէ։
Եւ աստուստ փութանակի 'ի Ծայրագոյնն ջերմութիւն [1],
285 Ամլ 'ի գարունն կոխէ, և մոռացուցանելով
Զցրտութիւնն մղէ և դտօյն ժողովէ։
Եւ զամենայն առնեն փոխադրութիւն՝ ընթացիւք,
Աղկանցն նմանութեամբ պարելով համանգամայն,
Եւ խառնեալ ընդ միմեանս զմատունս։
590 Որպէս զի պար յորդարեսցեն բարեկարգ կենցաղոյս։
Որպէս զի մեծասցի յիմաստուն ստացուածոց քոց
Ամենայնիւ յայանի իշխանութիւնդ։
Ժամանակ ձմերայնոյ, և ծառք վաղվաղակի
Ի հրաբեր ցրտութենէն թառամին.
295 Խամրի գեղեցկութիւնն, տկարանան ոստքն,
Թափի տերևն իբր մեռելոյ մազ։
Եւ յետ փոքու ինչ՝ զապականութիւն 'ի բաց դնէ,
Ի գեղեցկութիւն դարձեալ, և բերէ նոր մազ,
Բողբոջէ զգեղեցկութիւնն և տերևն՝ հեր.
300 Եւ յանյայտնիցն յառնեն գերեզմանաց,
Ըստ սովարական յարութեան ազգին։
Իսկ հնձոց ժամանակ, ոչ ունիմ՝ ասել՝
303 Թէ որպէս նոյն ինքն կիզիչ արեգակն [2],
305 Երբեմն թխացուցանէ զգոյնսն կիզմամբ,
Եւ երբեմն սպիտակացուցանէ զմարմինսն,
Եւ զոր ծնանի զսերմանեացն մանկունսն,
Գէճ գործէ զմրգոցն հիւթս։
Զի խառնես [3] զնոսա առ օդ ընթացիւք,
310 Զջերմն ընդ խոնաւին չարամանես ճանապարհակցի.
Որպէս զի խառնեացի միջնորդի յանկութեամբ՝
Որ 'ի նոսա պարարութեանցն Ծայրութիւնն.
Զի մի կեցցէ [4] ըմբռնմամբ ջերմութեամբ,
Ոչ գոլով 'ի նմա խոնաւուտ հիւթոյ.
Եւ ոչ դարձեալ 'ի Ծայրագոյնն սահեսցէ հեղումն,
(Եւ ոչ 'ի ջեռուցմանէն որբ մնացեալ) [5]

1. Իմա ոչ յեղու, ըստ որում 'ի վեր անդր (տող 280)։
2. Պակասի տող մի 'ի հայ թարգմանութեան, որ ըստ յոյն բնագրին պարտի լինել «'ի նմին ժամանակի և 'ի նմին չրջանի»։
3. Ցոյնն՝ զի խառնեն . . . շարամանեն, յերրորդ դէմս, որպէս և միտք բանին պահանջեն։
4. Ցոր. կից է, ուղղեցաւ ըստ յոյն բնագրին։ Միտք բանին են, մի գուցէ ջերմութիւնն սաստկութեամբ իւրով կիզուցու (զպտուղսն)։
5. Փակագծեալդ չկ 'ի յոյն բնագրին, որ ունի մթին իմաստիւք այսպէս.

digitised by A.R.A.R.@

Խոնաւութեանն բերումն ողողեսցէ։
317 Ա.ԼԼ որպէս 'ի մի գործ մշակք երկու,
Ցնանի հիւթ, և առաջի արկանէ զպարարտութիւն,
319 Եւ մրգոցն հում ծնանի զտղայն [1]։
324 Եւ վասն զի պիտոյ է պնդութիւն՝ դալարոյն,
Եւ թուլութիւն՝ մրգոցն կարծրութեան,
326 Մի ջերմութիւնն՝ հանդիպեալ երկոցունցն՝
Զոմն պնդէ և զոմն թուլացուցանէ հրաշալի բոցովն [2],
Եւ ընու զպակասութիւնն՝ հակառակ պարգևաց.
Դալարոյն՝ արմատ հաստատուն բուսուցանէ,
330 Եւ նուրբս իմն բարձրացուցեալ զմիրգսն [3] ջերմութեամբ,
Կերակուր մարմնեղէն իմն համեմէ ցօղով։
Որպէս զառ 'ի մէնջ սրտի հմութիւն [4],
Ճառագայթ իմանալոյ արեգականն ծագեալ՝
Ջեռացուցանէ, փափկացուցանէ, զարգացուցանէ և անուցա-
335 Եւ պտուղ դնէ 'ի նմա յանպտղութենէ։ (նէ,

«Եւ ոչ դարձեալ 'ի ծայրագոյնն սահեսցի հեղումն խոնաւութեան բերմամբ ողողեալ». կամ ըստ բառիցն յեղլոմ «խոնաւութեան բերումն մնացեալ»։

1. Այսպէս ըստ բառից յոյն բնագրին, որոյ իմաստք են՝ զի հիւթովք և պարարտութեամբ յարդիւնս հասուցանէ զչոր սաղմս մրգոց։ Աստի և անդր պակասեն չորս տողք 'ի հայումս։
2. Յոյնն ունի, ξένῳ λόγῳ, այն է՝ հրաշալի բանիւք կամ եղանակաւ։
3. Յոյնն, φήθοις (τοῖς ὀποῖς).
4. Իմա սառնորիւն, յորորիւն, պնդորիւն (սրտի)։

Շարունակելի

digitised by A.R.A.R.@